ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՈՒՐԱՐՏՈՒ ԱԱԿ ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
13	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	hh	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	Կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկա¬րությունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրա¬պետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրա¬պետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ արծա¬թագույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաստանի Հանրա¬պետության ծածանվող դրոշը: Կրծքա¬նշանի կենտրոնում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կանաչ ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում գրված են «ԱԻՆ

				ՀԱՅԱՍՏԱՆ», ներքևի հատվածում՝ «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կանաչ շրջանակում զետեղված է նախարա-րության խորհրդանիշը: Նախարարության խորհրդանիշի և շրջանակի եզրագծի ներքևի հատվածում գրված «ՓՐԿԱՐԱՐ» բառի միջնամասում նշված է հռոմեական «II» թիվը: Կրծքանշանի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված է «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 0100-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշաների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Տուփի արտաքին չափերը հետևյալն են՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 15X60X60մմ: Պատրաստված է ստվարաթղթից, կրծքանշանի արտաքին եզրագծով հարթակով՝ իր ճշգրիտ դիրքավորման համար:

				Կրծքանշանի հետ տրվում է վկայական (էսքիզ 12):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УРАРТУ ТПК АООТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
13				